Ծուշանիկ Կուրղինյան

Ճիշտ լուսաբացին

Գիշեր է . . . խավար, քամին դիվահար
Չի տալիս դադար . . .
Մի՛ քնի՛ր, լսի՛ր, մի՞թե չես հիշեր
Սյուները արնոտ, այն կախված լեշեր . . .
Ա՛խ, միշտ կը բերեն . . . նոքա չեն լալիս
Լույսը ծագելիս .

Այն մութ փոսերը իմ առաջ բացին .
Ամեն օրվա պես՝ ճիշտ լուսաբացին . . .
Մի՛ քնի՛ր, լսի՛ր, մի՞թե չտեսար՝
Ընկան հավասար . . .

Մի օր խաչն ընկավ վախից դողդոջուն,
Գնդակը կրծքին, երբ տվեց ողջույն . . .
Մինչ ե՞րբ պիտ բերեն . դաշտում այն հանդարտ
Քուն չունեմ անդարդ . . .

Միշտ աչքիս առաջ՝ սյուն, բահ ու կացին
Ամեն օրվա պես, ճիշտ լուսաբացին . . .
Դեհ, լսի՛ր, լսի՛ր, ինչո՞ւ չեն լալիս
Լույսը ծագելիս . . .

Գիշեր է . . . խավար . . . քամին հեծհեծում,

Իմ դուռն է ծեծում . . .

1908 թ. 18 փետրվարի